ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. փետրվարի 21-ին, N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՍՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի «է» ենթակետի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թ. հունվարի 23-ի թիվ 18-579կգ-25 միջնորդագիրը, համաձայն որի՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Սորիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Տ. Քոչարյանը 2024 թվականի մարտ-ապրիլ ամիսներին պաշտոնավարման ընթացքում իր մեղքով պետական կազմակերպությանը պատճառել է վնաս, որը գերազանցում է «Սորիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 1%-ը, ինչպես նաև հիմք ընդունելով Տ. Քոչարյանի կողմից նշված փաստով տրված բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Սորիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Տիգրան Քոչարյանին 2025 թվականի փետրվարի 21-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 07.03.2024թ. կնքված N7 աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշման մասին պատշաճ իրազեկել Տիգրան Քոչարյանին, իսկ որոշման օրինակը 3 օրվա ընթացքում հանձնել նրան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տ. Քոչարյանին իրազեկելու պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 21.02.2025 16:22:53 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ